ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«__»_____2024թ. Ն_____-Ն

ՈՐՈՇՈՒՄ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում գտնվող «Եռաբլուր» զինվորական պանթեոնին հարող տարածքի Շահումյան 6-րդ փողոցը, (սկսվում է Մամիկոնյան-Շահումյան 6-րդ փողոցի խաչմերուկից, հասնում՝ «Եռաբլուր» զինվորական պանթեոնի Փառքի ուղի՝ Սրբոց Վարդանանց Նահատակաց եկեղեցու հարող տարածք), նրբանցքը (սկսվում է ներկայիս Շահումյան 6-րդ փողոցից, հասնում՝ հ.91 դպրոց) և փակուղին (գտնվում է ներկայիս Շահումյան 6-րդ և 7-րդ փողոցների միջև) անվանակոչել Արցախի հերոս Աշոտ Ղուլյանի (Բեկոր) անվամբ՝ «քաղաք Երևան, Աշոտ Ղուլյան փողոց», «քաղաք Երևան, Աշոտ Ղուլյան փողոց, 1-ին նրբանց», «քաղաք Երևան, Աշոտ Ղուլյան փողոց, 1-ին փակուղի»:

2. Սույնը որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Երևան քաղաքի ավագանու
«Մայր Հայաստանի» խմբակցության անդամներ՝

Սուսաննա Մելիքյան

Աննա Ավետիսյան

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծնվել է 1959 թվականի հոկտեմբերի 6-ին Բաքվում: Երիտասարդ տարիներին Բեկորը աշխատել է որպես դերձակ, շինարար, ավտովարորդ և փականագործ: Մարտական անունը Աշոտը ստացել էր դեռևս նախապատերազմյան շրջանում, երբ 5 հոգով Շահումյանից Ստեփանակերտ զենք էին տեղափոխում: 5 տղաներից 4-ի անունը Աշոտ էր և, որպեսզի խոսելիս միմյանց տարբերեն, որոշում են բոլորին մականուն տալ: Աշոտին, որն արդեն հասցրել էր ինքնաշեն զենքերը փորձարկելիս մի քանի բեկոր «վաստակել», անվանեցին Բեկոր (Ասկոլկա):

Բեկորը մասնակցել է Արցախում մղված մարտերից շատերին՝ Ասկերան, Հադրութ, Շահումյան, Կրկժան, Վերին Շեն, Բուզլուխ, Մանաշիդ, Մալիբեյլու, Խոջալու, Լեսնոյ, Քարինտակ, Շուշի, Լաչին, Մատակերտ, Կուսապատ, Մաղավուզ, Սրխավենդ, Բաշ-Գյունեփայա, Օրթա-Գյունեփայա, Դրմբոն: Նրա հրամանատարությամբ բազմաթիվ բնակավայրեր են ազատագրվել:

1992 թվականին Շուշիի ռազմական գործողության ժամանակ առաջին վաշտը Բեկորի գլխավորությամբ առաջինն է մտնում քաղաք:

1992 թվականի օգոստոսի 24-ին Մարտակերտի շրջանի Դրմբոն գյուղի ազատագրման համար մղված մարտը վերջինը եղավ Բեկորի համար:

1993 թվականին Աշոտ Ղուլյանը հետմահու արժանացել է ԼՂՀ «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանի: 1999 թվականին ԼՂՀ նախագահի հրամանագրով արժանացել է «Արցախի հերոս» բարձրագույն կոչմանը, պարգևատրվել է «Ոսկե արծիվ» շքանշանով: 2002 թվականին արժանացել է «Շուշիի ազատագրում» շքանշանի: Նրա անունով է կոչվում փողոց Շուշիում, ինչպես նաև Կենտրոնական պաշտպանական շրջանի առաջին մոտոհրաձգային զումարտակը:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի N 2387 Ն որոշման 16-րդ կետը, առաջարկվում է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի «Եռաբլուր» զինվորական պանթեոնին հարող Շահումյան 6-րդ փողոցը, սույն փողոցի նրբանցքը և փակուղին անվանակոչել Արցախի հերոս Աշոտ Ղուլյանի (Բեկոր) անվամբ՝ «քաղաք Երևան, Աշոտ Ղուլյան փողոց», «քաղաք Երևան, Աշոտ Ղուլյան փողոց, 1-ին նրբանցք», «ք. Երևան, Աշոտ Ղուլյան փողոց, 1-ին փակուղի»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի N 2387-Ն որոշման 2-րդ բաժնի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

Երևան քաղաքի ավագանու
«Մայր Հայաստան» խմբակցության անդամներ՝

Սուսաննա Մելիքյան

Լիլիթ Ավետիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

0010 Երևան, Վ.Սարգսյան 3/8, հեռ. 594-004
Էլ. փոստ info@moj.am

N /27.3/19286-2024
«16» մայիսի 2024թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավինյան,

Ի պատասխան Ձեր՝ 2024 թվականի ապրիլի 29-ի թիվ 01/73045-24 գրության՝ կից ներկայացվում է «Երևան քաղաքում փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ,
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

5/16/2024

X

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARMENUHI 6610760128

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Դիանա Սահակյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն,
Հեռ. (010) 594-116

ՊԵՏԱԿԱՆ ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Երևան քաղաքում փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

«Երևան քաղաքում փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին կետով նախատեսվում է՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում գտնվող «Եռաբլուր» զինվորական պանթեոնին հարող տարածքի **Շահումյան 6-րդ փողոցը՝ նրբանցքով և փակուղով (սկսվում է Մամիկոնյան-Շահումյան 6-րդ փողոցի խաչմերուկից, հասնում «Եռաբլուր» զինվորական պանթեոնի Փառքի ուղի՝ սրբոց Վարդանանց Նահատակաց եկեղեցու հարող տարածք), անվանակոչել Արցախի հերոս Աշոտ Ղուլյանի (Բեկոր) անվամբ՝ «Աշոտ Ղուլյան փողոց», «Աշոտ Ղուլյան փողոց, 1-ին նրբանցք», «Աշոտ Ղուլյան փողոց 1-ին փակուղի»**: *Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման հավելվածի 12-րդ կետի համաձայն՝ Քաղաքային և գյուղական բնակավայրերում փողոցները կարող են անվանակոչվել թվային կամ անվանական կարգով. օրինակ՝ քաղաք Գյումրի, Պռոշյան փողոց կամ քաղաք Վանաձոր, 1-ին փողոց: Երևան քաղաքում փողոցների թվային անվանակոչման դեպքում փողոցի թվային անվանմանը պետք է նախորդի վարչական շրջանի և (կամ) թաղամասի անվանումը. օրինակ՝ քաղաք Երևան, Արաբկիր, 23 փող., քաղաք Երևան, Այգեստան թաղ., 12 փող.: Նույն որոշման հավելվածի 13-րդ կետի համաձայն՝ Քաղաքային և գյուղական բնակավայրերում նրբանցքները և փակուղիները կարող են անվանակոչվել միայն թվային ձևով. օրինակ՝ քաղաք Գյումրի, Պռոշյան փողոց, 1-ին նրբանցք կամ փակուղի:*

Նկատի ունենալով վերոգրյալն անհրաժեշտ է «Աշոտ Ղուլյան փողոց, 1-ին նրբանցք», «Աշոտ Ղուլյան փողոց 1-ին փակուղի» բառերը փոխարինել «քաղաք Երևան, Աշոտ Ղուլյան փողոց, 1-ին նրբանցք», «քաղաք Երևան, Աշոտ Ղուլյան փողոց 1-ին փակուղի» բառերով:

Բացի այդ, Նախագծի նախաբանում «2005 թ.ի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «2005 թվականի» բառերով, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասը, համաձայն որի՝ **Նորմատիվ իրավական ակտում տարեթիվը և ամսաթիվը գրվում են թվերով, իսկ ամիսը՝ տառերով: «Թվական» բառը և դրա հոլովաձևերը գրվում են ամբողջությամբ:**

Միաժամանակ հայտնում ենք, որ Երևանի քաղաքապետարանի 2024 թվականի ապրիլի 19-ի թիվ 01/64907-24 գրությամբ **ՀՀ արդարադատության նախարարություն է ներկայացվել մեկ այլ նախագիծ,** որով նախատեսվել է՝ **Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում գտնվող Լենինգրադյան փողոցն (սկվում է Կիևյան կամրջից մինչև «Սեբաստիա» և «Գրիգոր Հասրաթյան» խաչմերուկ) անվանափոխել** Արցախյան ազատամարտի մասնակից, Արցախի հերոս, «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանակիր Աշոտ Ղուլյանի (Բեկոր Աշոտ) անվամբ՝ **«Աշոտ Ղուլյան փողոց»:**

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ՝

5/16/2024

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

ԷՄԻԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Հ/Հ	Առաջարկության, առարկության հեղինակը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Կատարված փոփոխությունները
1.	ՀՀ արդարադատության նախարարություն «16» մայիսի 2024թ. N /27.3/19286-2024	**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ** **«Երևան քաղաքում փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ** «Երևան քաղաքում փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման (այսուհետ՝ Որոշում) նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ հայտնում ենք հետևյալը՝ 1. Նախագծի նախաբանում «2005 թ.ի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «2005 թվականի» բառերով:	1. Ընդունվել է: Նախագծի նախաբանում «2005 թ.ի» բառերը փոխարինվել են «2005 թվականի» բառերով:

		2. Որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին կետում անհրաժեշտ է «Աշոտ Ղուլյան փողոց, 1-ին նրբանցք», «Աշոտ Ղուլյան փողոց 1-ին փակուղի» բառերը փոխարինել «քաղաք Երևան, Աշոտ Ղուլյան փողոց, 1-ին նրբանցք», «քաղաք Երևան, Աշոտ Ղուլյան փողոց 1-ին փակուղի» բառերով:	2. Ընդունվել է: «Աշոտ Ղուլյան փողոց, 1-ին նրբանցք», «Աշոտ Ղուլյան փողոց 1-ին փակուղի» բառերը փոխարինվել են «քաղաք Երևան, Աշոտ Ղուլյան փողոց, 1-ին նրբանցք», «քաղաք Երևան, Աշոտ Ղուլյան փողոց 1-ին փակուղի» բառերով:

Երևան քաղաքի ավագանու

«Մայր Հայաստան» խմբակցության անդամներ՝ Սուսաննա Մելիքյան

Աննա Ավետիսյան